



Է Ո Ւ Բ Ի Դ Բ Ի Յ Ը Ի Ե Լ Ի Ը Ծ

ՏԱՐԱԶԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

№ 2 Կիրակի 10 յուն.արի

ԶԻՔ

չորրորդ տարի

1893



Չ մ Ե ռ

Գ. Բաշինջաղեանի նկարից.

Կ Ա Ս Ա Ր Կ Ա Ս Ն Պ Ա Տ Կ Ե Ր

Արևեստով վիպասան մի երիտասարդ խոր քնի մէջ ընկղմած երազումը մի նոր վէպ էր գրում, իսկ նրա մօտ Աւրիէյն ու Հերմէսը նստած վիճում էին իրար հետ: Երիտասարդը երազում լսում էր նրանց վիճաբանութիւնը և գրիչը վաչը դրած՝ ահանջ էր գնում:

— Այս խեղճին դու ես այսչափ լիմարացրել, որ երազումն էլ վէպ է գրում, — լանդիմանում էր Հերմէսն Աւրիէյին:

— Յիմարացնելը քո արևեստն է, պատասխանեց Աւրիէյը, — ես միայն խելօքացնել կարող եմ: Աստ խնդրեմ, մի՛թէ լիմարութիւն է վէպ գրելը:

— Մի՛թէ պատասխանի կարօտ է ասածդ, չորս: Մէկ մարդ մինչև լիմար չլինի, թնչպէս կարող է տակից զլխէց դուրս տալ, հազար տեսակ չեղած բաներ հնարել, անհամ անալի սուտեր կարկատել, որպէս զի կորսողանայ մի աւելի խոշոր սուտ ճշմարտի տեղ անցկացնել:

— Ձարմանալի արարած ես դու, Հերմէս, քո ստեղծողն էլ պիտի կարծէ, թէ բանի նման բան է շինել քեզ: Մի արարած, որ ի բնէ միամիտ լինի ստեղծւած, թնչ զաղափար կարող է ունենալ իմաստութեան մասին, և ի զուր չէր ատում Աստուծը, թէ աշխարհի մարդիկն աւելի են իմաստուն, քան թէ Սիմօլի բնակիչները:

— Կու անյաղթելի ես և չար, երբ քեզ հետխօսանք մարդկային լեզուի և մարդկային հասկացողութեամբ, որովհետև դու ծուկ ես մարդկանց զազափարը չար՝ ու բարու մասին, և եթէ նրանց դատաստանին դիմենք, ամենքն էլ կասեն, թէ Աւրիէյն ուղիղ է ասում: Բայց եթէ դու մի կտոր խղճմտանք ունենալիր, կը խոստովանէիր, որ սոքից մինչև զլուխ խարդախութիւն ես և խաբէբայութիւն:

— Լսիր, հոգիս, դու շատ միամիտ ես: Եթէ կայ մի բան, որ մարդիկ ծուռ են հասկանում, այդ այն է, որ քեզ բարի են համարում, իսկ ինձ՝ չար, մինչդեռ քեզ պէտք է լիմար անւանէին, իսկ ինձ իմաստուն, քեզ պէտք է համարէին ազիտութեան պաշտպան, իսկ ինձ գիտութեան և իմաստութեան, քեզ պէտք է համարէին հոգեաւ և հոգեհան, իսկ ինձ՝ ոգևորող և ներշնչող, քեզ մահատու, իսկ ինձ՝ կենսատու: քեզ՝ ամլութիւն, իսկ ինձ՝ աճեցութիւն: Ո՞վ է աւել մարդկանց գիտութիւն բարուց, ո՞վ է աւել նրանց գիր ու գրականութիւն, շոգենաւ ու շոգեկաւք, հեռագիր ու հեռաձայն և հազար ու մէկ տեսակ մեքենաներ: Մարդիկ և վայելում են իմ աւած բարիքը, և ասում — զրանք բոլորն էլ չարի հնարածն են:

— Եւ շատ ուղիղ են ասում: Ի՞նչ երջանկութիւն ես աւել դու մարդկութեանը քո հնարած բոլոր արևեստներովդ ու մեքենաներովդ. դու միայն ստատանայացրել ես մարդկային ցեղը, իրար մօտ արել, բանաւոր մարդկանցից շինել ևս այնպիսի հրէշներ, որոնք այլ ևս ոչ մի բանի նման չեն, զրկել ես արքայութիւնից և դժոխքի բաժին շինել:

— Ի՞նչու քնչ կայ, Հերմէս, եկ դու քո արքայութիւնից ձեռք քաշիր, իսկ ես իմ դժոխքից, թէև իսկապէս արքայութիւնն իմն է, իսկ դժոխքը քոնը, ըստ որում մէկ մարդ մինչև լիմար չը լինի, դժոխք չի գնալ, իսկ ես թշնամի եմ լիմարութեան, եկ, հաշտւենք միմեանց հետև մարդուն այսպէս բաժանենք, — մարմինն ինձ, իսկ հոգին քեզ, այս կեանքն ինձ, իսկ այն կեանքը՝ քեզ, ծընածն ինձ, մեռածը՝ քեզ: Մեռածին ուր ուզում ես տար, կուզես արքայութիւն, կուզես դժոխք, մեռածներին կառավարելը հեշտ է, իսկ սաղերին կառավարելը քո խելքի բանը չէ, այդ իմ գործն է:

— Ես համաձայն չեմ:

— Ինչու, հոգիս, քո նպատակն այն չէ, որ մարդիկ դժոխքի բաժին չը դառնան, այլ արքայութեան, ես քեզ եմ տալիս երկունն էլ, ուր ուզում ես՝ այնտեղ տար:

— Ես համաձայն չեմ, որովհետև ո՞վ իմանայ քո միտքն ինչ է: Կու ուզում ես աշխարհն ինչ խանութեան տակը դնել, բոլորովին ապականել, իսկ ես ապականւած հոգուն չեմ կարող մօտենալ և հակառակ չեմ, որ այդպիսին դժոխքումը տանջի: Աւրեմն դու ուզում ես վարպետութիւնով դժոխքիդ յաճախորդներին թիւր շտապնել:

— Եթէ այդպէս ես կարծում, ուրեմն շարունակենք մեր դարաւոր թշնամութիւնը միմեանց դէմ, դու աշխատիր մարդկանց լիմարացնել, իսկ ես կաշխատեմ իմաստանացնել, դու աշխատիր ինձ սատանայացնել, իսկ ես կաշխատեմ քեզ իշացնել և ես լոյս ունիմ, որ վերջ ի վերջոյ յաղթութիւնն իմն կը լինի, որովհետև դու ինքդ էլ ես տեսնում, որ մարդիկ օրէցօր յաւաջ են գնում, օրէցօր լուսաւորում և իմ դէմ լարած ձեր բոլոր մեքենայութիւնները մի օր կը փշրւին իսպառ և ես կիշխեմ ամենքի վրայ իբրև զուտ հանձար և կը լինիմ միահեծան տէր:

— Եւ այնուհետև չես ճանաչիլ քո ստեղծողին, քո աղբոջը, չես հպատակիլ նրա կամքին:

— Նա քեզ պէս լիմար չէ, մեծ է նրա տիեզերքը, լայն է նրա սիրտը, նա թող կը տայ, որ ես իշխեմ նրա անհուն աշխարհների մի չնչին հիւլէի վրայ և կառավարեմ իր տիեզերական օրէնքի համեմատ:

— Օ՛, սատանայ, սատանայ, որքան խո-

բամանկութիւն կայ քո մէջ: Բո բոլոր ասածները
բրդ այս մարդը լսում է երազումը և Ադամի պէս
խաբւում. քո բոլոր ասածներդ սա ընդունում է
իբրև գուտ ճշմարտութիւն:

—Եթէ կարող ես հերքել, հերքել ասածներս,
թող չըմոտորի այս մարդը, իսկ ես սրա ականջին
այս կասեմ, որ եթէ ուզում է շնորհալի գրող դառ-
նալ, թող իմացած լինի, որ հաստանայ սուսածը գը-
րողների փերն է, առանց աստանայի օգնութեան
շնորհքով բան գրել կարելի չէ, աշխարհիս բոլոր
հանճարները իմ ամենասիրելի բարեկամներն են ե-
ղել, միայն նրանք են հասկացել, թէ որպիսի բը-
նաւորութիւն ունիմ ես, ինչքան ինքնուրոյն, ինչ-
քան անկախ, ինչքան ազատ: Գեթէն ինձ գիմեց
իր Յաուտը գրելու համար, Բայրօնը՝ իր Ման-
ֆրէդը, Շէքսպիրն իր Մալբէթն ու Համլէթը և
նոյն իսկ բոլոր միւս գրածները. Շէքսպիրի գլխում
իմ ոգին էր խաղում շարունակ, նա մի գէւ էր
մարդկային մարմնով, Լերմօնտովն ինձանով միայն
կարողացաւ ինձ գրել...

—Բայց մէկը կար, որին չը կարացիր մօտենալ,
չար, և որ քեզ բաց է ի բաց մերժեց և հալածեց:

—Այն, բայց նրա ջգրու ես մօտեցայ Մահմէ-
գին և նրա համար մի զօրեղ հակառակորդ ստեղ-
ծեցի, մօտեցայ Լուծերին և պոպի իշխանութիւ-
նը կոծանեցի, մօտեցայ Կոլումբին և նրան Ամերի-
կա հասցրի, մօտեցայ Ֆրանկլինին և նրան մի նոր
Պրոմէթէս շինեցի, յափշտակել աւի երկնքի շան-
թը և մարդկութեան ձեռքին գործիք շինել տւի...
Օ... անթիւ են իմ աւած բարիքներս, բայց էլի
ինձ չար են ասում լիմարները:

—Եւ չիրաւի, շատ չար ես:

—Իսկ դու, խոստովանում եմ շատ բարի ես, դու
որ կաս, քո տիրոջ ջրկերն ես, մի ողորմելի արա-
բած, որպիսին ու ես մէկ էլ որ կաս:

Այս միջոցին քնած վիպասանը զարթեց: Նա
երազումը սրանց խօսակցութիւնը բառացի չէր
լսում, այլ ամեն մի բառը լսելիս մի նոր փոփո-
խութիւն էր նշմարում երազումը և այնքան արագ
էր կատարւում այդ փոփոխութիւնը, որ նա մի
հարիւրերորդական մանրերկրորդի մէջ մի ամբողջ աշ-
խարհք էր պտտւում, այնքան արագ, որ մի բա-
ռից յետոյ մինչև միւս բառն ասելը, նա անցնում էր
այդ անհուն տարածութիւնը: Սրինակ՝ Շէքսպիրի ա-
նունը լսելիս, նա գլխէ ի գլուխ անցնում էր նրա
բոլոր գրածներով և խօսյն լսում միւս բառը: Նա
տեսնում էր աւած մտքերի ընդարձակ պատկերնե-
րը և այդ պատկերները արագ արագ իրար էին յա-
ջորդում, ինչ արագութեամբ որ բառերն էին յա-
ջորդում իրար: Չըքնած ժամանակն էլ նրա միտքն
այդ պատկերացումներն ունէր, միայն երազում նա

տեսնում էր, ինչպէս աչքով: Ուրիշի խօսակցու-
թիւնը մարդկային ձայնով չէր կատարւում, այլ մի
անբացատրելի օգային շարժումով, որ մի չըլսած
մուզիկայի ձայնի էր նման: Այդ ձայնը քնածի ա-
կանջով նրա ուղեղին հասնելով, այնտեղից անզրա-
գառնում էր մարդկային բառերով:

Չարթեցաւ մեր վիպասանը և տեղումը նստած՝
երկու ձեռքի մէջն առաւ գլուխը և սկսեց միտը
բերել թէ որպիսի երազի մէջ էր ընկղմած: Երազը
միտը բերելով՝ նա սկսեց մտմտալ.

—Հրեշտակ, աստանայ, բարի և չար ոգիներ:
Մարդ ինչպէս իմանայ, թէ երկուսից որն է իս-
կապէս չար և որը՝ բարի: Մարդիկ այնպիսի
ստորոգելիք են աւել թէ մէկին և թէ միւսին,
որ երբ սխաւում ես քննադատել, ամեն ինչ խճըճ-
ւում է: Լաւ կը լինէր, ի հարկէ, որ չեղած բա-
ներին ոչ մի ստորոգելիք չը տային, բայց երբ մի
բան են ստեղծում և նրան չար կամ բարի ասում,
գոնէ պէտք էր նախ լաւ իմանային, թէ ինչն է
իսկապէս չար և ինչը՝ բարի: Մարդիկ այդ ստորո-
գելիքը աւել են այն ժամանակ, երբ բարու և չա-
րի մասին ուղիղ գաղափար չեն ունեցել: Իսկ մեր
ժամանակ Ուրիշին իրաւունք ունի ասելու, թէ իմ
արածս բարութիւն է և ոչ չարութիւն: Ուղիղն
ասած, ես աւելի Ուրիշին եմ համակրում որ իր
համար անկախ է և անընկճելի, քան թէ Հերմէ-
սին, որ մի կոյր գործիք է Զևսի և նրա կնոջ
ձեռքին:

—Ասեցիր, Հերմէս, ասաց Ուրիշը, դէ հիմա
երթաս բարով, զնն քո Հերայի մօտ և նրան սլա-
միր Զևսի արարքները, իսկ ես կը մնամ սրա մօտ,
որ թերտղեմ աւելի առողջ մտքեր:

Հերմէսը մռմռալով հեռացաւ, վիպասանից
խօսված, իսկ Ուրիշը մի պատկերի կերպարանք
առաւ և կախեց վիպասանի ննջարանում: Վիպա-
սանը չը լսեց սրանց վերջին խօսակցութիւնը, և
նորից քնեց աւելի քաղցր քնով: Առաւօտեան՝ երբ
զարթեց և տեսաւ պատկերը, սկսեց ապուշ ապուշ
նայել նրա վրայ և զարմանայ, թէ ով է բերել ար-
գեօք այս պատկերը և թէն է ներկայացնում սա
իսկապէս: Առաջին հայեացքից ոչինչ չընշմարեց,
բայց հետո՛հետէ ինչեր ասես, որ չըտեսաւ: Նրա մէջ
պարունակւած էր ամբողջ տիեզերքը բոլոր մանրա-
մասնութեամբ: Նա ոչ տպւած էր և ոչ նկարած
վրձինով, այլ ինքնուրոյն մի բան էր, նրա մէջ
ամեն ինչ շարժուն էր և կենդանի, և մեր վիպա-
սանը ինչ որ ցանկանում էր, նրա մէջ տեսնում
էր իր ուզածի կենդանի պատկերը ամենայն մանրա-
մասնութեամբ: Եւ այնուհետև նա սկսեց վէպ վե-
պի ետևից լոյս հանել մինը քանդակուն աւելի հե-
տաքրքրական: Ամենքն էլ զարմացել էին նրա բեղ-



Մ. Մ. 1850

Բ Ե Ր Ղ Ե Տ Ե Մ Ի Ա Յ Ր Ի Ա Ռ Ր Ր Մ Ա Ն Կ Ի Կ Ր

մնաւոր գրչի և հանճարի վրայ, բայց ոչ ոք չը գիտէր, որ նա այդ բոլորը հանում էր կախարդական պատկերից:

2. ԱՂԱՅԵԱՅ

Ի ն Չ Ո Ւ...

Ի՞նչու աշնանը
Գեղնում է ծաղիկ,
Ի՞նչու լուռ է
Թռչնի գալլալիկ:

Ի՞նչու տերևը
Գողում է, ընկնում,
Վտակն էլ գողգոջ
Գաշտում խոխոջում:

Ի՞նչու անտառ, գաշտ
Ջրկում են զարդից.
Մարդն էլ է տիրում,
Արձակում կսկիծ...

Ա՛հ, շուտով, գաժան
Չըմենն է գալու,
Ի՞նչո՞ւնքի կեանքին
Վերջ է նա տալու...

Սիրտ իմ, մի բաղխիր,
Թէ աշունդ եկել—
Պատրաստւիր ձմրան
Սառ գրկում ննջել...

ՍՐՈՒԳ

Ս Օ Ն Ա
IV.



Քիշերային խաւարը պատել էր երկիրը իւր սև քօղի տակ: Ամեն տեղ խորին լուռ-թիւն էր տիրում: Միայն հեռւից լսում էր Կուրակ-չալի տխուր և անվերջ մեղեդին: Գ... գիւղի շրջակայ անտառները մրափում էին խորը քնով, որը ստէպ ընդհատում էր բուերի «վայունով»: Լուսինը դեռ նոր էր սկսել ցոյց տալ իւր աղօտ եղջիւրը հորիզոնի մշուշների միջից:

Մի բարձրահասակ երիտասարդ հրացանն ուսին գնում էր գոյշ քայլերով Ա... գիւղը տանող ճանապարհով: Փոքր ժամանակից յետոյ նա կանգ առաւ գիւղի մօտ և, լարելով իւր լսելիքը, սկսեց ուշադրութեամբ ակննջ դնել դէպի ամենկողմ: Ա... գիւղում մեռելային լուռութիւն էր տիրում: Բոլոր գիւղացիք վաղուց արդէն հանգցրել էին իրանց ճրագները և քնած էին: Երիտասարդը քայլերն ուղղեց դէպի Տէր-Թաթասի տան կողմը և ցածր ցան-

*) Տես «Տարազ» № 1.

կապտից ցատկեց պարտիզի մէջ: Մի փոքր սպասելուց յետոյ, նա խորհրդաւոր կերպով երեք տնգամ հնդուհաւի պէս ձայն արձակեց: Պարտիզի ճառերի մթութեան միջից լսեցաւ մի ինչ որ խշխշոց: Երիտասարդը փոքր առաջ գնաց թէ չէ, իսկոյն երկու քնքոյշ ձեռքեր փաթաթեցան նրա պարանոցով:

Երկար երկու սիրահարները մի խօսք չէին գտնում ասելու. նրանք զրկախառնւած, ջերմ համբոյրներով էին դուրս թափում իրանց սրտի յուզմունքը: Վերջապէս կամաց լսեցաւ Սօնայի անուշ ձայնը.

—Վերջապէս, վերջապէս, Վօսի ջան, կրկին արժանացանք միմեանց տեսութեան...

—Ա՛խ, եթէ իմանայիր, թէ ինչքան բաներ պիտի ասեմ քեզ, իմ մարմն...

—Իսկ ես, իսկ ես, Վօսի ջան... սիրտս քիչ էր մնում պատուի դարգերից... մի ամիս է, որ արտասուքը այքերիցս չի պակասել... պատասխանեց օրհորդը:

Համբոյրները դադարեցան: Երկուսն էլ նստեցին կանաչ խոտերի վրայ:

—Վօսի ջան, ճիշտն ասա՛, ինձ սրտով սիրում ես:

—Եթէ սրտով չըսիրէի, այս կէս գիշերին...

Աստուած գիտէ, որ ես միայն քո սիրովն եմ շունչ քաշում...

Գրկախառնութիւնները նորոգեցան:

—Գիտես ինչ կայ, խօսեց օրհորդը.—ինձ ուզում են տան գեանջցի Սարգիս-բէկին...

—Ո՛ր Սարգիս-բէկին, հարցրեց օլլայլւած Վօսին.—նրան, որ սուղումը զուլուղ է անում...

—Այո... սրանից մի քանի օր առաջ եկել էր մեր գիւղը... իսկ երբ ես Գեանջա էի, այնտեղ եղբայրս խօսք է տւել նրան և մինչև տնգամ հրաւիրել էր իւր ընկերներին շնորհատուրելու...

Վերջին խօսքերը նետի պէս ցցեցին Վօսի սրտի մէջ. նա, լսելով այս բօթաբեր լուրը, քարացած մնաց. նա չէր հաւատում իւր սկանչներին. կարծում էր թէ Սօնան կատակ է անում, բայց նկատելով նրա վրդովմունքը և զգալով իւր ձեռքի տակ կոյտի սրտի բաբախումը, նա ամբողջ մարմնում մի սարսուռ գգաց:

—Իսկ ծնողքդ թնչ են ասում, խռոված ձայնով հարցրեց երիտասարդը:

—Ամենքն էլ ուրախ են այդ բանի համար... Ամենքն էլ ուզում են սպանել իմ դէպի քեզ ունեցած սէրս... մանաւանդ իմ հարստատ եղբայրս, Բեամալը, որ միշտ կրկնում է թէ՛ ես գիւղացու աղջիկ չեմ տալ, ես չինովնիկ վեսայ եմ ուզում... Ամենքն էլ ուզում են ինձ սող-սող ուղարկել գե-

բեզմանը... Օրիորդը այլ ևս չըկարողացաւ շարունակել. նա արտասուքով խեղճած, սեղմեց իւր գեղեցիկ գլուխը Վօսիի բաբախող կրծքին:

—Թէ ինձ սիրում ես,—վճռողաբար ասաց երիտասարդը,— պէտք է բոլորից էլ ձեռք վերցնես... ես աշխարհս տակ ու գլուխ կանեմ, չեմ թողնիլ քեզ խլեն իմ գրկից և ծախեն ուրիշին... Սօնա ջան, մի լար, հոգուդ մատաղ. քանի ես կենդանի եմ, դու իմն ես, իսկ ես քոնր...

—Աշխարհիս երեսին բացի քեզանից, ես ոչ ոք չունիմ,—առաջ տարաւ սիրտ առած օրիորդը.— դու ես իմ միակ յօյսը և պաշտպանը... Վօսի ջան, ինձ սպասիր...

Յանկարծ Տէր-Թաթոսի բախում լսեցաւ շան հաջոյ: Երկու սիրահարները, զարհուրած, բաժանւեցին միմեանցից և մի ակնթարթում անյայտացան մթութեան մէջ: Լուսաբայ էր: Սօնան ուշիկ քայլերով բարձրացաւ սանդուղքներով և հասաւ իւր անկողնուն: Նա այս ու այն կողմ նայեց և տեսաւ, որ ամենքը քաղցր քնած են, իսկ Տէր-Թաթոսի անկողնում ոչ ոք չըկար: Սօնան փաթաթւեցաւ իւր վերմակի մէջ: Այդ բոպէին լսեցաւ եկեղեցու գանգակի ձայնը:

V.



նցաւ մի շաբաթ:

Ա.Ս. գիւղում Գօլմարեօզանենց տանը հարսանիք կար: Գիւղի բոլոր ժողովուրդըն այտեղ էր: Բակը և սենեակները լի էին հիւրերով: Աւրախութեան ազազակները միախառնւելով զոււնայի խօսօտօտօյի և թմբուկի ձայների հետ, մի տեսակ խօս էին դարձրել բոլոր տունը: Հարսների և օրիորդների պարն անվերջ էր: Բոլոր երիտասարդների դէմքի վրայ խաղում էր ուրախութեան ժպիտը. նրանք այս կամ այն օրիորդի վրայ ծածուկ ցոյց էին տալիս և միմեանց կողքի հրելով, փսիքսում էին իրար ականջում. թէ ինչ էին փսիքսում, այդ Աստծուն էր յայտնի: Այդ երիտասարդներից մէկին բնաւ չէր զարձացնում հարսանեաց այդ ուրախ հանդէսը. նրա ճակատը պատած էր տխրութեան մռայլ ամպերով. նա անհանգիստ դէմքով այս ու կողմ էր նայում, կարծես մէկին փնտրում էր: Աերջապէս այդ երիտասարդը, ճղելով խուռն ամբոխը, անյայտացաւ քնքոյշ սեռի թուփող բազմութեան մէջ: Անցաւ մի քանի բոպէ և նա երևաց գոմի առանձնացած պատի մօտ, որտեղ խօսում էր խիտ ոգևորած կերպով մի հասակ առած կնոջ հետ: Այդ կինը Տէր-Թաթոսի կինն էր:

—Մեր Բեամալը քեզ նմաններին աղջիկ չի տալ, գնա՛, գնա՛... անդադար կրկնում էր երեցկինը երիտասարդին, որը երկար խնդրելուց և ազաչելուց լետոյ վերջապէս ասաց.

—Տէրակին, տեսնում ես այս խանչալը... սրբանով ինձ էլ կրտսանեմ, Սօնային էլ... .

—Վո՛յ քուանամ... աղա՛, դու իսկի չես ամաչում... զօռով ուզում ես աղջիկ տանել. բացազանչեց երեցկինը:

—Սօնան ինձ է սիրում, ես նրան. նա իմն է, ես նրանը... ոչ ոք իրաւունք չունի նրան տրանալու:

—Մէ, կորիր. անամօթ... իմ աղջիկը քեզ չի սիրում... Նա քանի՞ գլխանի է, որ առանց իւր ծընողաց կամքին մի օտար աղայի սիրի... Ուզում ես այդպիսի շառերով խեղճ Սօնայի անունը կտրեմ...

Վօսին յարմար ժամանակի էր սպասում, որ առանձին խօսէր Սօնայի մօր հետ և մի կերպ համոզէր նրան: Քանիցս անգամ նա գիմել էր Տէր-Թաթոսին, բայց ամեն անգամ նա մերժում էր ստացել: Մի անգամ նա գնացել էր Քանձակ Բեամալ-բէկի մօտ, բայց այս վերջինս ոչ թէ միայն մերժել է երիտասարդի աղերսը, այլ մինչև անգամ նրան մի քանի արտակներ է տւել և դուրս վրձնել անից:


Գօլմարեօզանենց հարսանիքը չարմար դէսը էր Վօսիին տեսուցելու երեցկնկայ հետ: Վօսին Գ... գիւղից դուրս գալու ժամանակ իր հետ մի մատանի էլ էր վերցրել, որ մի կերպով կարողանար յանձնել Սօնայի մօրը:

Նա այնպէս էր կարծում, որ եթէ մատանին մի կերպ յանձնելու լինի երեցկնկան, այնուհետև ամեն բան վերջացած կըլինի:

—Տէրակին, մէկ էլ եմ ասում—թէ քո աղջկայ կեանքից ձեռք չես վեր առել, սա այս մատանին, կրկնեց Վօսին:

Տէր-Թաթոսի կինը ամեն անգամ սարսափում էր, երբ երիտասարդի բերանից մի բան էր լսում Սօնայի կեանքի մասին: Նա զտնւում էր անելանելի գրութեան մէջ: Եթէ ընդունէր մատանին, այն ժամանակ ամենքի յոյսերը՝ աստիճանաւոր փեսայ ունենալու՝ պիտի ջախջախէին. իսկ եթէ մերժէր, այն ժամանակվտանգ էր սպառնում Սօնայի կեանքին: Փառասիրութիւնը և մայրական սէրը մաքառում էին միմեանց հետ մօր կանացի սրտում: Վօսիի աչքերը լցւել էին արիւնով. նրա դէմքը ահարկու էր: Երեցկինն առանց սարսափանքի չէր կարողանում նայել նրա վրայ: Նա գիտէր, որ Վօսիի ձեռքից ամեն բան կարող էր գալ: Ամենքը ճանաչում էին նրան թէ ինչ պտուղ է: Վօսին նկատելով, որ երեցկինը տատանւում է, աւելի սիրտ առաւ և խանչալի երախակալը թափ տալով, սպառնաց.

—Մատանին վեր ա՛ռ, թէ չէ էս խանչալը առաջ կըկտրեմ Սօնայի ջիգեարը, իսկ յետոյ էլ իմ սիր-



Միս. Առաքելյան

Ա. դ ք ա լ ա ր
Գ. Բաշինջաղեանի նկարից.

ար կրկնուեմ... ինձ Գուրգարենց Աեզդի-Մօսի կա- սեն, զիտես...

Երեցկիներ երկար տատանելուց յետոյ, վեր- ջապէս ընդունեց մատանին:

Մօսին երեկոյեան գոհ սրտով վերագարձաւ Գ... գիւղը և գործի յաջողութիւնը սրտամեց իւր զառամեալ հօրը, որը խաչակնքելով բացազանչեց.

— Որդի, Աստուած ամեն մարդու ճակատին մի բան է գրել, մեռնեմ նրա զօրութեանը. նա մար- դուս ճակատի զրածը չի փոխիլ ոչ մի ժամանակ...

ՅԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄԱՆՆԱՆՑ

[Կը շարունակի]

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԿԵԱՆՔԸ

Մեր մտաւոր կեանքի արդիւնքների մէջ նոր վէպը և առհասարակ նոր գրականութիւնը արդէն ունի կէսդարեան պատմութիւն:

Այդ ժամանակամիջոցում շատ ազդեցութեանց է նա ենթարկւել, և բանաստեղծների մի շարք ար- դէն իջել է գերեզման: Այս բոլորիս մեր գեղար- ւեստական գրականութեան հին հսկաներից հա- մարեա թէ ոչ ոք չէ մնում ասպարիզի վրայ և ժա- մանակ է արդէն որ հեղինակող, ստեղծագործող նոր սերնդի հետ աշխարհ գալ և՛ ուղղութեան թարմութիւն:

Մինչև այսօր մեր վիպասանները և երգիչները շօշափել են զխաւորապէս սիրոյ զգացմունքը, որի բազմատեսակ, ամենանուրբ ելևէջներով յափշտակել են քանիցս անգամ հայ ընթերցողին:

Միայն մէկ երկուսը աշխատել են գրականու- թիւնը դուրս հանել անհատական կեանքի այդ նեղ շրջանից և զբաղւել աւելի ընդարձակ շահերով. դրանք ստեղծել են քաղաքական վէպ, քաղաքական երգ: Սակայն հասարակական վէպ և երգ դեռ ևս չունենք:

Մեր դարի մէջ մարդուս ամբողջ ներքին էու- թիւնը յուզում են ոչ միայն սէրը, այլ առաւելապէս ուրիշ զգացմունքները: Գժւար է դարձել մի կտոր հաց ճարելը, որի համար ամենաուժգին կը- ուիւ է մղում թէ պատահական և թէ պատմա- կան հանգամանքների դէմ: Մի ուրիշ, աւելի վսեմ կուիւ է մղում զազափարների տարբերութեան շնորհիւ և այդ կուիւը աւելի կատաղի և սրտամաշ է քան թէ հացի կուիւը: Այդպիսով ամեն օր մեր շուրջը շարունակ շարժում է, վերելից ներքև, ներ- քեից վերև, զանազան դատակարգերի, հասարակու- թիւնների, խմբերի, սերնդների մէջ:

Եւ հասարակական մէկ կարգի ընդհարումը միևսի հետ բազմաթիւ զոհեր և յաղթողներ է ա-

ռաջ բերում, վիշտ և ուրախութիւն, հառաչանք և հրճանք անհատի համար:

Արևմտեան գրականութիւնը վաղուց է, որ ըս- կսել է ճգնել ցոյց տալու թէ Բնչպէս այդ ամբողջ շարժման մէջ միաւորը, անհատը գտնւում է ան- դադար գործունէութեան մէջ, որ նրա բոլոր ըզ- դացմունքները, ամբողջ ոչ թէ միայն ֆիզիքական, այլ և մտաւոր և բարոյական ոյժը գրգռում է, լա- բում է, սրում է և շատ անդամ սպառում: Մէրը բացառական նիւթ չէ վէպի և երգի. դրա կից ներս է սարդել աղքատութիւնը և հարստութիւնը, գա- ղափարի հալածանքը և մոլութիւնը, նախանձը և անձնագոհութիւնը, դաւադրութիւնը և պաշտպանու- թիւնը, միխօսքով գրականութեան մէջ արտայայտուում է ամբողջ հասարակութիւնը իր կենսական շահերով:

Այդ օրինակ հասարակական վէպի ու երգի դեռ միայն թոյլ նշոյլները կան մեր մէջ:

Ճշմարիտ է՝ դրա համար անհրաժեշտ է կեան- քի մանրակրկիտ ուսումնասիրութիւն, հեռատես և կտրուկ աչք:

Ճշմարիտ է՝ դրա համար անհրաժեշտ է մեծ մտաւոր զարգացում, որ ըմբռնել տայ կեանքի խոր- հուրդը:

Ճշմարիտ է՝ հասարակական գրականութեան համար անհրաժեշտ է և փափուկ, լայնասէր սիրտ, որ կենդանի կերպով զգում է մերձաւորի ցաւերն և յոյզերը:

Բայց առանց այդ ուղղութեան գրականութիւ- նը առաջ մղող ոյժ չէ կարող լինել, չէ կարող կըր- թել միտքն ու սիրտը:

Հասարակական գրականութիւնը՝ ոչ թէ վերա- ցական դատողութիւններով, այլ թանձրացեալ, մար- մին ունեցող պատկերներով աչքի առաջ հանելով մեր կեանքը, լուսաբանում է սրան սրոշ դասաւո- բութեամբ, զուգադրութեամբ և մօտենում է ճիշտ գիտութեան:

Ստիպելով մեզ ստանջւել և ուրախանալ իր հե- բոսների հետ, այդ ուղղութիւնն ամբացնում է մեր սիրտը մեր անձնական կուիւ համար, որ ամեն օր պիտի մղենք հանգիստը արգելքների դէմ. այդ գրականութիւնը ձուլում է կրօնի հետ:

Հանգամանքների այն բազմաթիւ բարդութիւննե- րի մէջ, ընդհանուր կեանքի այն յոգնակի վշտերի և ուրախութիւնների մէջ, որոնք պահանջում են արդէն պարզ դատողութիւն և վառ զգացմունք, ժամանակ է, որ վերջապէս ստեղծւի մեր մէջ ևս հա- սարակական վէպ և հասարակական երգ:

ՍՏ. ՆՐՍԻՅԵՆ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՆԱԲԿՆԵՐ

I.

Որքան գրականութիւնը մեծ ազդեցութիւն ունէ հասարակական մտքի և հոգու զարգացման վրայ, նոյնքան իւր կողմից հասարակութիւնը ներգործական գեր է կատարում իւր ազգային գրականութեան բարեփոխման վերաբերմամբ: Հեղինակը և ընթերցողը այն երկու տարբերն են, որոնց փոխադարձ յարաբերութիւնից առաջանում է գրականութեան ուղղութիւնը: Որովհետև մեր խօսքը գեղարվեստական գրականութեան մասին է—հետեւաբար այդ յարաբերութիւնից են առաջանում և գեղիցիկ պահանջները, որ ընդունւած է անւանել էսթետիկական ճաշակը:

Այս տեսակէտից հայելով, մենք համարձակ կարող ենք ասել, որ կրիտիկայի դերը գրականութեան զարգացման վերաբերմամբ անհամեմատ աւելի նսեմ է, քան թէ սովորաբար կարծուծ է: Արդարև մի տեսակ թիւրիմացութեան հետևանք, եթէ չստենք սխալ պէտք է համարել այն ընդհանրացած տեսութիւնը, թէ իբր կրիտիկան գրականութեան զեկալարն է: Այլ կրիտիկան աւելի գրականական ուղղութիւնների բացառողը և հասարակական բարոյական պահանջները լուսաբանողի դեր է կատարում, քան թէ առաջնորդի և ուսուցչի, հետևաբար այդ դերը աւելի կրաւորական կարող է համարել, քան թէ ներգործական: Ուստի մոլորւած է այն մարդը, որ հաւատացած է, թէ քննադատները երբ և է կարողացել են կամ կարող են իրանց ճաշակի համաձայն զեկալարել գրականութիւնը մանաւանդ փոխել նրա ուղղութիւնը:

Սրանով, յայտնի բան է, մենք չենք կամենում հերքել կրիտիկայի նշանակութիւնը: Բնորոշ սկաւալը՝ որքան էլ կրաւորական լինի նրա դերը, այսուամենայնիւ նա մի որոշ չափով ազդում է գրականութեան վրայ: Բայց ազդում է ոչ անմիջապէս, ոչ անկախ և ինքնուրոյն կերպով, ոչ կրիտիկան անհատական կամքի համաձայն, այլ այն չափով, որ չափով կրիտիկոսը երևան է դալիս իբրև հասարակութեան առաջնակարգ և ամենակիրթ դասի ներկայացուցիչ, կամ ճիշտն ասած իբրև ժամանակի առաջագէծ ոգու արտայայտիչ:

Աւանց օրինակներն մեր միտքը չատերին կարող է մութ թուալ, ուստի թող փաստերը մեր թարգմանը լինեն: Յայտնի է, որ անգլիական հասարակութիւնը, որին և անգլիացի ընթերցողը ազգային աւանդութիւնների, կրօնական սկզբունքների մանաւանդ ընտանեկան առաքինութեան անխախտութեան ետևողուն պաշտպան է: Իսկ ոչ միայն ժողովրդի անկիրթ կամ կիրթ խաւերն յատկանշին է, այլ ամբողջ ազգի, նոյն իսկ նրա առաջնակարգ դասի: Այս պատճառով էլ անգլիացին իւր ազգային հեղինակները պահանջում է նախ և առաջ շարժանք դէպի իւր սիրած ու փայլալուստ սկզբունքները: Գրականութիւնը, կամայ ակամայ ենթարկելով այդ պահանջին, ստիպւած է գոհացնել եթէ ոչ լիովին գէթ մեծ մասամբ հասարակութեան ճաշակը: Եւ որքան հեղինակը անկախ և ինքնուրոյն հոգու տէր լինի, չէ կարող արհամարհել այդ ճաշակը, եթէ ինքը չէ կամենում դատապարտել արհամարհանքի կամ մոռացութեան փոշի մէջ թաղել: Այսպէս, օրինակ, Գիլիենը, որ մեր դարի ինքնուրոյն հեղինակներից մէկն է համարուծ, նա ևս իւր

գորեղ հանձարը հպատակեցրեց ազգային պահանջներին, իւր վէպերն մէջ հանդիսանալով ընտանեկան առաքինութեան սկզբունքների գորեղ պաշտպան և չարի դէմ բարի յաղթութեան կողմնակից: Եւ ոչ մի քննադատ, որքան նրա ֆանտաստիկ ձգտէր ժամանակից առաջ թրուելիքներ գործել, չէր կարող փոխել տիրապետող սկզբունքների ուղղութիւնը, այսինքն չէր կարող ժամանակի ոգու և ճաշակի դէմ յաղթող հանդիսանալ:

Նոյնը կարելի է ասել նաև ուրիշ հեղինակների և ուրիշ ազգերի գրականութեան մասին: Վեդդենք Ֆրանսիական ժամանակակից գրականութեան սանձաղձակ ուղղութիւնը: Ասել թէ այն ուղղութիւնը մի քանի անհատներ—լինին նրանք հեղինակներ թէ քննադատներ—խելքի ու հոգու ծնունդ է, կը նշանակէ չը հասկանալ ամենահասարակ երևոյթների սարգ պատճառները, ժամանակակից ֆրանսիական բուրժուա հասարակութեան տիրապետող գեղի, շուայլ, կըքոս, անբարոյական կեանքը, ինչպէս ամեն բանի, նոյնպէս և գրականութեան համար ստեղծել է իրան վայել պահանջներ: Ուստի այն հեղինակը, որ կամենում է յաջողութիւն ունենալ, կարողացել, պէտք է հպատակի այդ պահանջներին:

Նոյն իսկ Զօլայի նման մի գրող—որ, արդարև, որքան ևս հարւածել, մի գորեղ գեղարվեստական տաղանդ է,—որիչ ոչինչ է՝ եթէ ոչ իւր հասարակական ճաշակի ծնունդը: Թող նա որքան կամենում է պնդէ, թէ ստեղծեց գրականութեան համար մի նոր դպրոց, բայց ինքը հասարակութեան պահանջների ստեղծագործութիւնն է: Թող նա անհասկանալի մոլորութեամբ կրկնէ՝ նատուրալիզմ, գիտնական մեթոդ, գիտնական վերլուծութիւն, հասարակական կեանքի անդամագնեութիւն բաւերը, բայց նրա դպրոցը ուրիշ ոչինչ է՝ թէ ոչ շրջանի և ժամանակի ծնունդ: Եթէ նա իր նատուրալիստական մեթոդը վիստանութեան մէջ գործ դնէր աւելի ամօթխած ձևով, չըշտալիէր և նոյն իսկ վերլուծէր գեղի հասարակութեան կրքերը, չէր ունենալ կէսը այն յաջողութեան, որ այժմ ունի:

Փաստերը ակնյայտ են: Նոյն իսկ այժմ, երբ ֆրանսիական հասարակութեան ընտիր մասի կողմից լուծւ են բողոքի ձայներ գրականութեան բարոյական անկման դէմ և քննադատները աշխատում են այդ ձայներին արձագանք տալ, Զօլան և նրա դպրոցին պատկանողները, որ շարունակում են տեսականապէս պնդել նատուրալիզմի կարևորութիւնը, գործնականապէս ակամայ սխալ են այլ ուղղութեամբ գործադրել այդ նատուրալիզմը, այսինքն հետևել հասարակութեան նորագոյն բարոյական պահանջներին: Ապացոյց նոյն իսկ Զօլայի վերջին Rève և La Debacle վէպերը, որոնց մէջ այլ ևս այն ուժով չէ երևում այն պորնօգրաֆիական ուղղութիւնը, որին հեղինակը նատուրալիզմ է անւանում, ինչ ուժով նա տիրապետում է «Nana-ի, L'Aascocmir-ի, Po-Bouillet-ի և L'Hommo-Bête-ի մէջ»:

Այսպէս, որ կողմ որ նայենք, նոյն երևոյթը կը տեսնենք. ամեն տեղ գրականութեան վրայ ներգործութիւն ունէ հասարակութեան ճաշակը և գեղեցիկ պահանջները, ինչպէս և հասարակութեան վրայ փոխադարձ ազդեցութիւն ունէ գրականութիւնը:

Իսկ մի ընդհանուր օրէնք է, ուր ոչ ոք չէ կարող բացառութիւն կազմել:

Իստեանք այժմ այն հարցին, որ իսկապէս գրեց

մեզ այս համառօտ՝ գուցէ մի փոքր էլ կցիտուր՝ տեսութիւնն անել։ Խնդիրը վերաբերում է հայ գրականութեանը և հայ հասարակութեանը, նոյնպէս և այն փոխադարձ ազդեցութեանը, որ այդ երկու մարմինները ունեն միմեանց վրայ։

Կենդ հայ գրականութիւնը եւրոպական գրականութիւններէ շարքը—անկասկած ծիծաղելի կը լինէր, ինչպէս և անհեթեթ բան կը լինէր հայ ազգի դեռ ևս աղքատիկ կուրտուրան համեմատել առաջնակարգ ազգերի դարաւոր կուրտուրայի հետ։ Սակայն կան ընդհանուր պայմաններ, որոնք հաւասար ոյժ ունեն համամանման երևոյթներէ վերաբերմամբ որ ազգի մէջ էլ կրկնէին այդ երևոյթները և քաղաքակրթութեան ինչ աստիճանի վրայ ևս գտնէին այդ ազգերը։

Այսպէս, կան տարրական արհաւանջներ, որոնց ոչ մի գրականութիւն չէ կարող արհամարհել եթէ նա նկրտումներ ունէ գեղեցիկ գրականութիւն համարելու։ Օրինակ, բանաստեղծութիւնը գանազան ազգերի մէջ կարող է ներշնչւած լինել տարբեր տեղեկեցիկացով և տարբեր գաղափարներով, նայելով ազգերի քաղաքական վիճակին և քաղաքակրթական աստիճանին։ Նոյնպէս և գանազան բանաստեղծներ կարող են ոգևորւած լինել տարբեր զգացումներով, համաձայն իրանց անհատական ոգուն և առանձնապահութիւններին։ Բայց գեղարեստական գրողը նախ քան մտքերի քարոզիչ և իւր հասարակութեան կամ ազգի բարոյական թարգման լինելու՝ պէտք է ստեղծագործական ոգի և գեղեցիկ ճաշակ ունենայ։ Թող ինձ քո տեղեկեցիկական ձգտումների գնահատութիւնը, բայց եղիւր նախ և առաջ ճշմարիտ զգացումների արտայայտիչ, եղբր բնութեանը հաւատարմ և մարդկային բնաւորութեան հոգեբանական երևոյթների ճշգրիտ թարգման։ Ներում ենք քեզ քո՝ մինչև անգամ մեզ համար անընդունելի՝ գաղափարները, բայց եթէ այդ գաղափարները վէպի, պոէմայի, դրամայի մէջ արտայայտւում ես բերտ ձևով, ոչ-գեղարեստօրէն, քեզ կարող ենք համարել փնխտփայ, քարոզիչ, հրատարակախօս, բայց ոչ գեղեցիկ գրականութեան ծառայող—նչ քնարերգակ, ոչ վկայասան, ոչ գրամատուրգ։

Ահա այս տեսակէտից նայելով, դժւար է ասել, թէ մենք հայերս ունենք գեղարեստական գրականութիւն։ Հարկաւ, մեր խօսքը քանակութեան մասին չէ, այս կողմից մեր գրականութիւնը կարող է պարծենալ մի շարք անուններով և մեծ մեծ հատորներով։ Բայց մաղեցէք այդ հատորները, անցիկացէք նրանց գեղարեստական նոյն իսկ ամենատարրական պայմաններէ քուրայով, և դուք այն ժամանակ միայն կարող էք պարծենալ, եթէ մի ահազին կտոր մօտիկի մէջ գտնէք գոտ մետաղի հատիկներ։

Ճշմարիտ է, դժւար է շատ բան սպասել մի հասարակութիւնից, որի նորագոյն մտաւոր կեանքը հազիւ կէս դար գոյութիւն ունէ։ Բայց անհերքելի մտորութիւն և ինքնախաբէութիւն է նոյնպէս հաւատացնել, թէ այդ հասարակութիւնը արդէն կարողացել է ստեղծել գրականութիւն, այս բառի անխառն նշանակութեամբ։ Այն ինչ նկատելի է, որ վերջին ժամանակ մեզանում շատերն են գրաւած այդ ինքնախաբէութեամբ և շատերի բերանից կը լսէք «մեր վկայական գրականութիւնը», «մեր բանաստեղծութիւնը», «մեր դրաման» և այլ այսպիսի վրձուն բառեր։ Սրա հետ կը լսէք և մի շարք անուններ, որոնց

քանակութիւնը ազէտին միայն կարող է խաբել։

Այս մտորութեան, այս կոյր ինքնախաբէութեան հիմնական պատճառն այն է, որ մեզանում տակաւին չէ ստեղծւել գրականութիւն ասած բանի մասին ճիշտ գաղափար, որ չըկայ գեղեցիկ վերաբերմամբ փոքր ինչ նուրբ հասկացողութիւն—էսթէթիքական ճաշակ։ Եւ չըկայ նա ոչ միայն հասարակութեան մէջ, այլ և նոյն իսկ մեր գրականական շրջանում։ Որքան անկիրթ է ընթերցողը ճաշակը, որքան կոպիտ են նրա բանաստեղծական պահանջները, նոյնքան անտաշ է և գեղեցիկ գրականութեանը ծառայողների ճաշակը, Հակառակ դէպքում, եթէ այսպէս չը լինէր, ինչպէս կարելի էր արդարացնել այն գրականական մրուրների գոյութիւնը, որ գրեթէ ամեն օր երևան են գալիս բանաստեղծութիւնների, վէպերի, վէպիկների անունով և որոնց մէջ բացակայ է, չենք ասում ստեղծագործութիւնը (творчество), այլ և քիչ թէ շատ կիրթ ճաշակը, ոճի նրբութիւնը։

Եւ այս գոհակ ուղղութիւնը հայ գրականութեան մէջ կը շարունակուի մինչև այն ժամանակ, քանի որ հասարակութեան առաջնակարգ դասը, այն, որ ունի քիչ թէ շատ գրականական հոտառութիւն, իւր պահանջները մամուլի մէջ չի արտայայտիւ։ Այլ խօսքով ասած, քանի որ այդ դասը չի աշխատիլ գրականութեան վրայ ունենալ այն փոխադարձ ներգործութիւնը, որի մասին վերը խօսեցինք համառօտ կերպով։ Իսկ թէ ինչ եղանակով և ինչպէս պէտք է արտայայտուին այդ պահանջները—այս մասին կը խօսենք մի ուրիշ անգամ։

ՇՐՊՂԱՆՁՂՊՁ

Հ Ս Յ Ո Յ Գ Ի Ր Ը *)

(Չարուճակութիւն)

«Հայոց՝ գրի» առաջին մասը, որի համառօտ բովանդակութիւնը մէջ բերինք նախորդ համարում՝ ինքնուրոյն աշխատութիւն, հեղինակի մտքի ծնունդը չէ, այլ հետեղութիւն է գիտութեան մէջ ընդունւած հայեացքին՝ լեզւի և գրի ծագման ու դարգացման մասին, կամ աւելի ճիշտ ասած՝ խմբագրութիւն է եւրոպացի գանազան գիտնականների յայտնած կարծիքներին։—Ինքնուրոյն կարելի է համարել հայոց նշանացի խօսակցութեան նւիրած երեսները (34—36) և Էմինի կարծիքի հերքումը հայոց հին նշանագիրների գոյութեան մասին (եր. 105—112)։ Գլխաւոր ազբերները, որոնցից օգուտ է հեղինակին՝ եղել են Հուսէրովա Վ., Տայլոր, Լազարուս, Փաուլման, Մասպէրոյ, Լընսթրման, և յատկապէս հայոց լեզւի ու գրի ծագման նւիրած գլուխներում՝ Ինձիճեան, Լազարով, Մորգմանն, Ֆր. Միլլէր, Էմին։ Սոցանից գառ հեղինակն աչքի առաջ է ունեցել և ուրիշ շատ գրաւորներ, որոնք սակայն երկրորդական կարեւորութիւն են ունեցել նրա համար։ Այս ազբերներէ մէջ աչքի է ընկնում Բ. Պատկանեանի բացակայութիւնը, որ ի միջի այլոց կրկու գրաւոր է թողել (երկուսն էլ հայերէն թարգմանւած), մէկը հայոց լեզւի բունած գիրքի մասին հեղիկ-եւրոպական լեզուների շարքում, և միւսը Վանի սեպաձև արձանագրութիւնների մասին, ուր ի միջի այլոց խօսում է նաև ասորական սեպագիրների մասին, հերքում է Լընսթր-

*) Տես «Տարագ» № 1.

մանի կարծիքը, թէ Վանի արձանագրութիւնների լեզուն վրացերէն է, տարակուսական է համարում Մորգմաննի առաջարկած՝ այդ արձանագրութիւնների ընթերցանութիւնը: Այս խնդիրներն յատկապէս շօշափուում և քննուում են «Հայոց գրի» առաջին մասում, և ցաւալի է տեսնել, որ միակ հայ գիտնականի ողջամիտ հայեացքները և դատողութիւնները զանց են արւած հեղինակից:

Հեղինակը նոյնպէս անձանօթ է Կ. Կոստովիչի նըշանաւոր մասնագիտական ընդարձակ աշխատութեան Հին Պարսկական սեղագիր արձանագրութիւնների մասին (Inscriptiones palaeo-persicae, Ս. Պետերբուրգ 1872) և այս կէտում օգտուել է հնացած և ոչ ճիշտ աղբիւրներից:

Առաջին մասի բովանդակութեան վրայ մենք կանգ չենք առնի. բաւականանում ենք ասելով, որ այստեղ հեղինակն, հետևելով վերոյիշեալ աղբիւրներին՝ յայտնում է ընդհանրապէս ուղիղ և այժմ ընդունելի հայեացքներ էական կէտերում. իսկ մանրամասնութիւնների մէջ անում է երբեմն սխալներ, որ արդիւնք են կամ հեղինակի աղբիւրների սխալատարութեան կամ սորան, որ նա մասնագէտ չէ այն խնդիրներին, որոնց մասին խօսում է:

Որովհետև այս առաջին մասն, ինչպէս ասացինք, խմբագրութիւն է, աւելի կամ պակաս սպաստ հետևողութիւն դանազան գիտնականների՝ ուստի մենք մի քանի խօսքով կը բացատրենք, թէ սրբան յաջող է այդ խմբագրութիւնը:

Ինչպէս մարդ ընդունելով նիւթական կերակրի բազմաթիւ տեսակները մարում, սեփականացնում է իրան, արիւն է դարձնում և իւր այս սեփական արիւնը դործ է անում իւր մարմնի հազարաւոր պիտուցներին համար՝ այսպէս և այն բազմատեսակ մտքերն ու զգացումները, որ մարդ ստանում է վրքերից, խօսակցութիւններից, դիպածներից և այլն՝ մտքի գործանցում պէտք է չիւնի, խառնելն միմեանց հետ, ազգեն միմեանց վրայ, եթէ կարելի է պատկերաբար բացատրել՝ նրանք պէտք է ենթարկւին մտաւոր-քմիական ազդեցութեան, տարբարոււն և նոր բաղադրութիւններ առաջացնեն. այս նոր բաղադրութիւնները, որ հետևանք են իւրաքանչիւր անհատի նախընթաց մտաւոր գործունէութեան՝ դաւանում են այնուհետև մարդու սեփական հայեացքն ու համոզումը, նորս գիտութիւնն ու գգացմունքը. նրանք կը կոչւին մարում իւրացրած մտքեր: Բայց ինչպէս որ չըմարում են ինքերից, հացից, մսից, ձուկից, իւղից չէ կարելի շինել մարմին, ջրային համակարգութիւն և կմախք՝ այսպէս և չէ կարելի մտաւորական մի շէնք կառուցանել փոխ առնւած, չմարում մտքերից. այդպիսի շէնքի ամեն մի մասը միւսի հետ կապ չի ունենայ, համաչափութիւն, զուգութիւն, ամբողջութիւն կպակասի նորան, նա կարող է նայն իսկ հակասական, միմեանց ոչնչացնող տարրեր պարունակել: Բայց որ դիտաւորն է՝ նորա մէջ չի լինի ողի, մտքի ստեղծագործական ոյժ, որ ազդում, ողևորում և համոզում է:

Այս նմանութիւնը յակամայից մեր մտքում ծագեցաւ՝ «Հայոց գրի» առաջին մասի ընթերցումից յետոյ. և յիրաւի նա շատ անդոյն, անկենդան է, համաչափութիւն չունի. մարում և վերարտագրւած չէ, այլ կատկապւած այս և այն հեղինակի մտքերից. մտքերն ինքն ըստ ինքեան ճիշտ են, բայց հեղինակի ստեղծագործական ոյժը, ողին պակասում է նոցա մէջ: Եւ դժւար չէ բացատրել սրա պատճառը. այս առաջին մասի բովան-

դակութիւնը մի քանի ընդարձակ գիտութիւնների և մասնագիտութիւնների նիւթ է կազմում:— փիլիսոփայութեան, լեզագիտութեան, եղիտագիտութեան, ասորագիտութեան կայն, որոնց և ոչ մէկին մասնագէտ չէ հեղինակը, ուզում ենք ասել՝ միսթեմարար ուսումնասիրել չէ, որ կարողանար իւրացնել այս գիտութիւնները և իւր կողմից վերարտագրէր ասելիքը. այլ նա օգտուել է մի քանի բաւ և մի քանի միջակ արժանաւորութեան աղբիւրներից, որոնցից և ծայրաքաղ է արել թարգմանաբար և քաղածաբար: Այսպիսի հանգամանքում էլ փորձւած և վարժ գրչի համար անկարելի չէ յաջող կոմպիլացիա անել. բայց հեղինակը այդ վարժութիւնը դեռ չէ ունեցել իւր գիրքը գրելիս, որը, որչափ մեղ յայտնի է՝ նրա առաջին գրաւոր աշխատութիւնն է:

Մանրամասնութիւններին զալով մենք մասնացոյց կլինինք մի քանի թերութիւնների վրայ, որ մենք նկատեցինք այս առաջին մասում:

Չափազանց շատ տեղ է արւած Դ. Խնճիճեանի կարծիքին ու նորա հերքումին: Հ. Խնճիճեանը 1835 թւին, երբ լեզագիտութիւնը դեռ որբանում էր գտնւում ջանք էր անում ապացուցանել, թէ հայերէնը աշխարհի առաջին լեզուն է, Արամ նախահօր խօսածը. այս միտքը նա ապացուցանում է սլամական կերպով— Աստուածաշնչի և Յորհնացու յայտնի աւանդութիւնների վազագրութեամբ— և լեզագիտական ճանապարհով, ցոյց տալով որ բազմաթիւ առարկաներ հայերէն լեզուով այնպիսի անուններ ունին, որոնց հնչիւնը համապատասխանում է աւարկայի յատկութեան^{*} այսպէս՝ նապատակ = ապաստանող, տղաւնի = աղու ունի, ուղա = ռիտտ, ճանճ, ճճի, ծիտ, ծիժեւն՝ գրանց արձակած ձայներից և այլն: Խնճիճեանի այս անտութիւնն այժմ ոչ միայն հետեւողներ ու պաշտպանողներ, այլ նոյն իսկ հերքողներ չունի— այն աստիճան միամիտ և լեզագիտութեան յայտնի օրէնքներին հակառակ է, այսօր նոյն իսկ ուսումնարաններում երեխաներին աւանդում են առողջամիտ տեղեկութիւններ հայոց լեզուի ծագման մասին: Բայց հեղինակը չգիտենք ինչու այնպիսի կարևորութիւն է տւել Հ. Խնճիճեանի կարծիքին, ու աշխատում է հերքել նրան: Եւ պէտք է խոստովանել, որ մեծ աշխատութիւն է գործ դրել հերքելու համար այն, որ ինքն ըստ ինքեան հերքւած է. 85—87 երևաներում հեղինակը Հ. Խնճիճեանի բացատրած բաւերից 27 բաւի ստուգաբանութիւն է մէջ բերել համաձայն արդի լեզագէտների կարծիքին. և մենք շատ բաւ գիտենք, որ այդ երկու-երեք երես ստուգաբանութիւնները գանազան գրքերից քաղելու համար գուցէ մի չաբաթ ժամանակ հարկաւորել է հեղինակին^{*}:

Այս ապարդիւն աշխատութիւնը նման է այն մար-

^{*} Բաւերի ծագման այս տեսակ բացատրութիւնը յայտնի է գիտութեան մէջ անւանաստեղծութիւն անունով (Onomatopée, onomatopoeikon).

^{*} Ի դէպ նկատենք, որ սխալ է ասել, թէ «անուած բաւը ծագում է հին բակարիականից», «կապիկ ծագում է սանակրիտից» և այլն: Այդ և հարկաւոր բաւեր ոչ թէ ծագում են սանակրիտ, զենդ և այլ լեզուներից, այլ ազգակից են այս լեզուների բաւերին. իսկ թէ հայերէնը և թէ սանարիտը, զենդը և այլն ծագում են հնդիկ-եւրոպական մայր լեզուից, որ գոյութիւն այլ ևս չունի և չէ թողել գրաւոր յիշատակարաններ:

զի աշխատութեան, որ մի մարդկային մարմնի երակներից հեղուկը հանելով՝ մանրացուցական և քիմիական հետազոտութեան ենթարկէ և գրանով ապացուցանէ, որ այդ մարդկային մարմնը մեռած է. մինչդեռ ամենին յայտնի է, որ այդ մարմնից գլուխը կտրւած է:

Նոյնպէս, մեր կարծիքով, բոլորովին աւելորդ էր Վանի սեպագրերների մասին խօսելիս մէջ բերել մեր հնագոյն պատմութիւնն ըստ սեպագրութիւնների. աւելորդ էր մանաւանդ այն պատճառով, որ այդ պատմութիւնը, ի նկատի ունենալով հայկական սեպագրութեան ընթերցանութեան անկատարութիւնը՝ արժանահաւատ չէ, մանաւանդ յատուկ տնօրէնների կողմից: Ենչ հարկ կայ հայոց գրի հետազոտութեան գրքում գետեղել հայոց հին պատմութիւնը, այն էլ անստոյգ, երեակայական պատմութիւնը:

Սոցա փոխանակ՝ շատ համառօտ և անկատար է սեպագրի «էութեան և ծագման խնդրի» բացատրութիւնը (երեք երես). մինչդեռ շատ աւելի նպատակայարմար կլինէր՝ մէջ բերել յայտնի այբուբենները պարսկական, ասորական սեպագրութիւններից և ենթադրական այբուբենը հայկականից:—Նոյնպէս անկատար է լեզուի ծագման «վերացական կամ հրաշքի տեսութեան» հատւածը— մի երեսից քիչ աւելի (51—52): Հեղինակը արդարացնում է, կարծես նոյն իսկ Չատագովում է այդ տեսութեան առաջ գալը. բայց չէ անում այն՝ ինչ որ կարևոր էր. չէ հերքում այդ սխալ տեսութիւնը, որ կարող է նախապաշարել շատ շատերին, ինչպէս երկար ժամանակ նախապաշարել էր: Եւ հերքման այս բացակայութիւնն աչքի է ընկնում աւելի այն պատճառով, որ հեղինակն ինքն էլ չէ ընդունում հրաշքի տեսութիւնը, ինչպէս երևում է նոյն գլխի վերջում նրա մէջ բերած այս ողջամիտ հայեացքից, թէ «լեզուի ծագումը տեղի է ունեցել աստիճանաբար դարգացմամբ և կատարելագործելի է հետզհետէ ժամանակի ընթացքում» (եր. 65): Մինչև երբ մենք պէտք է սքոզենք մեր խիղճն ու համոզմունքը, քաշելով դարևոր նախապաշարմունքից, միջոցիկն ու երկբայութեան մէջ թողնելով մեր ունկնդիրներին և ընթերցողներին:

Հեղինակը 117 երեսում մէջ է բերում Գարեհ Վշտասպետի սեպագրութիւններից մի հատւած հայերէն փոխագրութեամբ (transcription) և բառացի թարգմանութեամբ ըստ Պատկմանի: Թարգմանութիւնը բառացի ճիշտ է այն բնագրի հետ, որ գտնուում է Վոստովիչի վերջիցիակ հետազոտութեան մէջ, բայց փոխագրութեան ճշտութիւնը շատ և շատ կասկածելի է. մէջ բերենք բառացի այդ հատւածը.

«Աւ դա-րի-հա-ֆա-ու-իչ գա իր-դա-իր-րա
«Ես գարեհ արքայ մեծ

գա իր-դա-իր ու ի-նա-գա-ան սին-իլ-կա գա
արքայ արքայից ես արքայ պարսից արքայ
գա-ա-հա-ու-իչ-նա նա ու ի-խ-դա-աչ բա-դա-ակ-րի
գուտունների (?) ես Վշտասպի որդի

իր-դա-մա բու-ա-նու սա-բի-ակ-րի հա-կա-մա-նու-սի-եա»: Արդամայ թուն (?) Աքիմենեան»:

Թէ ինչ լեզուով է այս հատւածը—չգիտենք. այսքանը գիտենք, որ դա հին պարսկերէն չէ. բայց չենք կարծում որ դա ասորեստանեան կամ սկիւթական լեզուով էլ լինի. աւելի հաւանական է, որ դա ոչ մի լեզուով չէ, կամ

այն աստիճան աղաւաղւած է արտագրութեան և սպագրութեան ժամանակ, որ անձանոչելի է գարձել: Եւ յիշուելի, արքայ բառը այստեղ պատահում է հինգ անգամ. անծանօթ լեզուով արքայ բառը երեք անգամ արտայայտւած է դա ձայնով, մի անգամ իրողսիր ձայնով և մի անգամ ինսպան ձայնով. միւս կողմից իրողսիրա նշանակում է մեծ: Գարձեալ՝ վշտասպի որդի բառերն արտայայտւած են իխդասաչ բաղաակրի ձայներով, որ անհաւանական է. որովհետեւ առաջինը չէ պարունակում Վշտասպայ բառի վերջին վանկը, որը լրացնելու համար երևի պէտք է կարգալ իխդասաչ բաղաակրի, ուրեմն և որդի բառն անծանօթ լեզուով՝ չէր լինի բաղաակրի, այլ գաակրի: Գարձեալ՝ Արդամայ=իրդամա անուն չէր կարող գոյութիւն ունենալ այդ անծանօթ լեզուով, քանի որ բուն պարսկական արձանագրութեան մէջ կարդացւում է Arsāmahyā (սեւական հ., Արչամա-ի): (Երևի այստեղ չ գիրը փոխել է զ հեղինակի գրչի տակ): Եւ այլն:

Մենք վստահ ենք, որ եթէ մէկը նոյն իսկ հեղինակին հարցնելու լինի, թէ ինչ լեզուով է իր մէջ բերած փոխագրութիւնը՝ ինքն էլ կխոստովանի թէ չգիտէ:

Այժմ խնդրի է ծագում, թէ ինչ հարկ կար «Հայոց գրի» ներքւած մի հետազոտութեան մէջ գետեղել մի «արձանագրութիւն» լի սխալներով, որի ոչ միայն լեզուն ծանօթ չէ ընթերցողին և հեղինակին, այլ և յայտնի չէ նրանց, թէ ինչ լեզուով է: Պարզ է որ այդ «արձանագրութիւնը» ոչ ուսումնասիրութեան ու համեմատութեան նիւթ կարող է լինել և ոչ հետաքրքրութեան:

Այսպիսի հատւածը, թէկուզ կէս երես տեղ բռնէ 400 երեսանոց գրքի մէջ՝ մեծ արատ է բերում որ և է լուրջ ուսումնասիրութեան և կտակածելի է դարձնում ամբողջ գիրքը:

Հեղինակն երբեմն յայտնում է այնպիսի մտքեր, որոնց մենք չենք կարող հաւատ ընծայել, որչափ էլ որ յարգելի լինին նրա ազգիւրները: Օրինակ, նա ընթերցողներին հաւատացնում է, թէ «նշանացի խօսակցութիւն» (այսինքն ձևերի, գլխի, աչքերի և այլն շարժումներով բան հասկացնելը) «աւելի սղբու է քան խօսքը և աւելի մօտիկ մարդկային հոգուն քան խօսքը» (եր. 27): Գժևար թէ մենք, խօսելու ընդունակութիւն ունեցողներս, նախանձէինք խուլ և համբների ազդու նշանացի խօսակցութեան:

Ուրիշ տեղ հեղինակն ասում է. «Հայոց լեզուի «գուտ հայկական» մասի հետազոտութիւնն անկարելի է (?)... սակայն ինչ վերաբերում է հայ «սկզբնական լեզուի» ծագման եւ դարգացման, հասկանալի է, որ այդ (գա) տեղի պէտք է ունենար... աստիճանաբար դարգացման օրէնքով» (եր. 88): Այստեղ հակադրւած են միմեանց «գուտ հայկական» լեզուն և «հայ սկզբնական լեզուն», որովհետեւ լեզուի հետազոտութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ լեզուի ծագման ու դարգացման քննութիւնը, որ հեղինակն անում է «սկզբնական հայերէնի» վերաբերութեամբ: Ընթերցողը իրաւունք ունի կարծելու, թէ ըստ հեղինակին՝ անկարելի է հետազոտել «գուտ հայկական լեզուն», իսկ կարելի է հետազոտել «սկզբնական հայերէնը», ուրեմն՝ թէ ըստ հեղինակին տարբեր բաներ են «գուտ հայկականն» և սկզբնական հայկականը»: Ուրիշ տեսակ հասկանալ կարելի չէ հեղինակի խօսքը: Բայց նայն հեղինակը նոյն գրքի 75 երեսում ասում է. «Հայոց լեզուի սկզբնական, այսինքն զուտ հայկական տարրը չէր կարող մի որ և է անհասի ստեղ-

ծագործութիւն լինել⁴. որից երևում է, որ ըստ հեղինակին՝ «սկզբնական հայերէն» կամ «չորստ հայկական» միևնոյն բանն են նշանակում:

Այսինքն միևնոյն բանը թէ կարելի է և թէ անկարելի: Յաջորդ երեսում հեղինակն ասում է. «ՔԱՆԻ ՈՐ հայկական ցեղը գեո. ևս չէր ենթարկւել օտար ազդեցութեանց և առանձնակի կեանք էր վարում, յեղուն (ես)»⁵ դարպասում էր աստիճանաբար. ԻՍԿ ՆՐԲ հայը գուրսեկաւ էր սահմանափակ շրջանից և շիւեցաւ իր դրացի զօրեղ ցեղերի հետ, նրա յեղուն ես ենթարկեցաւ այդ զօրեղ ցեղերի ազդեցութեանը»: Այս հակադրութեան առաջին մասը (քանի որ—աստիճանաբար) բոլորովին ճիշտ է, երկրորդ մասըն էլ բոլորովին ճիշտ է. բայց երկուսը միմեանց մօտ դնելը իբրև ներհակական մասեր իսկ չազկապով՝ տրամաբանական մեծ սխալ է: Կարծեմ բացատրելն աւելորդ է:

Նոյնպիսի պակասութիւն նկատում է և 42—43 երեսում, ուր հեղինակը կամենում է հերքել Լազարուսի համեմատութիւնը բառի և պատկերի մէջ: Տեղը մեզ չէ ներում մէջ բերել և բացատրել այդ հատուածը, որ միևնույն կու երես կրբաւէր. այսքանս ասենք, որ Լազարուսի բոլորովին ճիշտ նկատողութիւնը հեղինակը սխալ է համարում, լաւ ուշադիր չլինելով նրա մաքի բոլոր նրբութիւններին: Իսկ իր հերքումի հիմքը տրամաբանօրէն խախտու է:

Մտքերի տրամաբանական կապակցութեան մէջ մեր նկատած այս պակասութիւնները ցուալի են մանաւանդ այն պատճառով, որ գրքի հեղինակը տրամաբանութեան և հոգեբանութեան ուսուցիչ է:

Հեղինակը գործ է ածում երբեմն բառեր օտարաբար և անսովոր նշանակութիւններով, որի պատճառը հաւանօրէն այս է, որ նա ճիշտ չէ ըմբռնել օտար լեզուի բառի նշանակութիւնը, երբ օգուտ է քաղել օտարալեզու աղբիւրներից, կամ չիտթել է նմանաձայն բառերի նշանակութիւնները: Այսպէս նա գրում է. (վայրենի իշխանը) «առնում է նամակը կրկին իր ձեռքը և հետագօտում ըտղձայի հայեացքով» (եր. 21.—պէտք է երևի լինէր՝ խորագին, թերևս գերմ. forschender Blick):—«Մարդկային այն ցեղերի մէջ, որոնք գեո. ևս ընական գրութեան մէջ են», (պէտք է լինէր՝ նախնական կամ գոնէ՝ սկզբնական գրութիւն, ինչպէս հեղինակը ուրիշ տեղ գործ է ածել «սկզբնական մարդ» եր. 27. երևի «բնական գրութիւն» գերմ. Natur... բառն է: Հ. Կոյրուստանն էլ այս բառը միշտ «բնական» բառով է թարգմանում, որ յաջող չէ):—«Մանուկը լեզուն սովորելուց առաջ գործ է գնում հասկանալի շարժումներ» (եր. 26. ուզում է ասել, թէ մանուկը գործ է գնում այնպիսի շարժումներ, որ ինքը հասկանում է. պէտք էր գոնէ ասել՝ հասկացողական):—«Մարդուս նոյն իսկ միայն բուսական գոյութեան ժամանակ՝ օգնութեան կարօտութիւնը գրգռում է անհատներին այրոց հետ կազակցելու» (եր. 39. պէտք էր ասել՝ անեցական կամ անտանական գոյութեան (կամ կեանքի) ժամանակ. այստեղ էլ երևի չիտթւել են végé-tatif և végétal բառերը): Եւ այլն:

Իբրև յաջողած տեղեր առաջին մասում յիշու ենք—Էմինի՝ Հայոց հին նշանադիրների գոյութեան մասին յայտնած կարծիքի հերքումը (105—112). Հայոց նշանա-

ցի խօսակցութեան բացատրութիւնը (34—36). Հայոց լեզուի ծագման և ուրիշ լեզուների շարքում բունած տեղի մասին խմբագրութիւնը (66—70): Մայրենի լեզուի նշանակութիւնը (74) և այլն: Բովանդակութեան կողմից, ինչպէս վերն էլ ասացինք՝ ընդհանրապէս գոհացուցիչ է ամբողջ այս մասը. նրա պակասութիւնը խմբագրութեան տեսնելուցի մէջ է գլխաւորապէս:

Յաջորդ անգամ կրաւունքը գրքի էական և, որչափ կարծում ենք՝ աւելի յաջողած մասին վրայ խօսելու:

ՍՏ. ՄԱՆՈՍՄԵԱՆՑ

(Կը շարունակուի)

1892 թ ի ի Ը

Այլ իննսուն երկու թիւ, դնաւ ու էլ յետ չըզաս,
Գու մարդկային ազգութեան աւիր չափագանց վնաս,
Վեց աւուր ծնունդ էիր քու շնորքդ ցոյց աւիր,
Հրաշալի սուրբ տօնը քեզանով գարձաւ զազիր,
Քառասուն մարդ Տփլիսում Կուր զեաթի մէջ լսեղդեցիր,
Գրիր սև հողի ասկը առանց հաղորդ և անմաս:

Քանի մեծցար՝ օր աւուր բնութիւնդ վատացաւ,
Բարութիւնդ նւագեց, չարութիւնդ շատացաւ,
Չախորդութեան վատ սերմը բոյս աւեց արմատացաւ,
Ով քո յոյսով գործ բունեց՝ վնասուց ազքատացաւ,
Հիւանդութիւն և մահը բազմացաւ առատացաւ,
Գարձար անիրաւ տարի, թունաւոր ներւած կարտաւ:

Հընչի ձև ստացար երբ եղար վեց ամսական,
Հնդախա ծնաւ քեզանից մոտու Մէշէդ Խորասան,
Սկսեց կտորելը լսեղճ մարդկանց ճանճի նման,
Սյնտեղից էլ տարածեց, հասաւ մեկ՝ Ռուսաստան,
Հարածեցիր անխնայ գու մարդկային ազգութեան,
Գուցէ երկինքն ուղարկեց քեզ մեզ համար պատուհաս:

Այնուհետև սկսար հըլիլ հայ ազգութեանը,
Գերանդիդ նոր սրելով մաար մեր բուրաստանը,
Նախ լսեցիր ք սնաստեղծ պաշտելի Պատկանեանը,
Յետոյ Նար-Բէյ՝ բախտազուրկ ողբացեալ գիանականը,
Հասաւ Արծուիկ Գարեգին մեղաբաշուրթ Սրուանձաւանը,
Կտրեց կենաց թելերը, անգութ մահը վաղահատ:

Մենք կարծեցինք այսուհետ հարածիդ կուտաս զազար,
Ռ՛ւմ մտքից էր անց կենում՝ որ նոր ցու կայ մեզ համար,
Յաւ ու շատ անտանելի որ չի լինիլ վեղ ու ճար,
Հազար կայ որ մէկ չարժէ, մէկ կայ որ արժէ հազար,
Սյդ առկուն Արծրունին էր «Մշակ» թերթի զեկավար,
Նրան էլ մահացրիր էլ չը թողիր բան պակաս:

Զիւանիս քեզ կաղաչեմ՝ լաւութիւն արն արի,
Քո արած վատութեանդ վրայ զղջա, զազարի,
Չարութեանդ փոխարէն աշխատիր գործես բարի,
Վեց օր ունիս կը մեռնիս, վարւէ քիչ մարդավարի,
Պատմութեանդ մէջ անունդ մենք կը դնենք սիղծ տարի,
Եթէ այդ քո՞ գէնքերդ գարող նոր տարուն կուտաս:

ՍՏԸԸ-ՁՊՈՍՄ

*) Բնագրի եւս բառը փակագծի մէջ գրինք. մենք, որովհետև աւելորդ է, և խանգարում է իմաստի ճշտութիւնը:

Ա. Խ թ. Ա. Մ Ա. Ր

Երջկով Ախթամարի մօտական գիւղերը, մենք բեցինք հետեւալ հին աւանդութիւնը*):

Ժամանակով Ախթամար կղզին ուրիշ անուն է եղել կրկնա: Մի գիւղացի երիտասարդ, յաճախ այդ կղզին զննարով, սաստիկ սիրահարուած է մի դեղեցիկ օրիորդի վրայ: Վախենալով գիտող աչքերից, դրանք խօսք են կապուած ծածուկ տեսնել ամեն գիշեր ծովի ափին: Երիտասարդը օր ու գիշեր վարժուած է լողալու մէջ և շուտով այնքան հմտանում, որ սկսում է ցամաքից դէպի կղզին գնալ և էլի յետ վերադառնալ, այսինքն լող տալ չորս ժամ շարունակ: Այնուհետեւ պայման են դնում, որ ամեն գիշեր, երբ օրիորդի ծնողները քնեն պրծնեն, նա դուրս գայ տնից, դնայ ծովի ափ ու սպասէ այնտեղ: Բայց տեսակցութիւնը պէտք է տեղի ունենար միմիայն մութ գիշերներին, որպէս զի կղզեցիք չըճանաչէին դեղեցիկ թամարին ու չըբանային դապանիքը:

Եւ ահա ամեն օր, կէս գիշերին, սիրուն թամարը ուրախ ուրախ վազում է կղզու մի յետ ընկած ափ, կրակ է վառում այնտեղ ու սպասում սրտասարով իր սրտի սեղանին: Երիտասարդը արդէն ջրի մէջն է այդ միջոցին: Եւանդոտ կերպով իր թևերը շարժելով, ընթանում է նա առաջ ու շուտ շուտ նայում հեռաւոր կրակի լոյսին, որպէս զի չըմտրելի ծովի մէջ ու չըհեռանայ իր թամարից:

Անցնում են շաբաթներ ու ամիսներ և երկու սիրահարները անյադ կերպով անձնատուր են լինում իրանց զգացումներին: Նրանք երջանիկ են և սոց երջանկութեանը ոչինչ չի հասնի աշխարհում:

Բայց, աւանդ, վարդը առանց փշերի չէ և շար մարդիկ միշտ անպակաս են Աստուծու երկրում:

Մի քանի կղզեցիք ընկնում են սիրահարների հետքերի վրայ, դարձնա-մուտ են լինում և բաց անում նըրանց դադանիքը... Իրանք հետեւում են այդպէս մի քանի գիշեր մեր միամիտներին և հասկանում թէ ինչ նըշանակութիւն ունի թամարի վառած կրակը: Եւ ահա մի խաւար գիշեր, հէնց որ թամարը կրակը վառեց, դա-

ւանից դուրս պրծան այդ անպիտանները, հալածեցին խեղճ ազջկան ու շտապով կրակն հանգրբին...

Ուժգին ուժգին խփում է իր բազուկները աւերներին դժբաղդ լուզորդը, աչքերը չուռ գէպի հեռու հորիզոն և լոյս չէ դառնում... Նա փոխում է իր ընթացքը, դնում մի ուրիշ կողմ, դնում ու դնում, բայց դարձեալ... կրակ չըկայ: Նա յետ է դառնում և ծուռում մի ուրիշ կողմ, բայց դարձեալ, դարձեալ...

—Ախ, թամար... ախ, այս ինչ արիւր ինձ... ախ, թամար...

Մըմջում է ուժասպառ լուզորդը և, իր աննման թամարի անունը ատամներում, դո՛հ դնում կատաղի աւերներին...

Եւ այդ օրից այդ կղզին Ախթամար կոչեցին *):

Տ. ՓՐՈՂՈՄԵԱՅ

խառն լուրեր

Յայտնում ենք, որ Կարա-Մուր-գայի Չուռուագը խմբագրութիւնը ստանձին և մաքուր ազգայնութեամբ և ազնիւ թղթի վրայ լոյս կընծայէ և իր ընթերցողներին կուզարկէ իբրև պրէմիա: Նոյնպէս և խմբագրութիւնս պատրաստում է Գր. Արծրունու մեծագիր (բնական մեծութեամբ) կիսապատկերը, որ յոյս ունի շուտով տալ մեր ընթերցողներին իբրև պրէմիա:

Ներկայ համարն ևս ուղարկելով մեր անցեալ տարւայ բաժանորդներին՝ յայտնում ենք, որ սրանով դադարեցնում ենք ուղարկել «Տարազի» այս տարւայ համարները նրանց, որոնք ներկայ տարւայ համար բաժանորդագրութիւնը չեն նորոգել:

Օղեսոսայից մեզ գրում են, որ այնտեղ հայոց եկեղեցում դեկտեմբերի 27-ին հոգեհանգիստ կատարուեցաւ Գր. Արծրունու համար, որի մասին տեղական թերթերում յայտարարութիւններ էին ազգայնել նախօրօք:

—«Одес. Листок»-ում դուրս եկաւ հանդուցեալի համակրելի կենսագրութիւնը և նրա կատարած մեծ դերի ամփոփ նկարագիրը:

Գրիգոր Արծրունին բացի իր «Մը-

շակ» լրագիրը և ասան կահ-կարասիքը ուրիշ դոյք և կաւածք չէ թողել, որոնց և կտակել է տ. Մարիամ Մեղի-Աղամարեանին, իսկ հայրական մնացած անշարժ կաւածք մնացել է քաղաքումս մի կտոր հող, որ սեպհականութիւն է պ. Անդրէաս Արծրունուն:

«Արարատի» մէջ կարդում ենք հետեւեալ լուրերը.—Նոյնմբ. 18-ին. Մինոզը հրամայեց յանձնել վերապատիւ Արիտակէս Եպիսկոպոս Սեդրակեանին այցելութեան ելնելուն՝ Ս. Գեղարգ, Խորվիքապ, Ս. Ստեփանոս Նախավկայ Կարմիր վանքը և Երջանիկ Ս. Կարապետի վանքերին. ստուգել հաշիւները, վերահասու լինել զարգերին, կաւածներին. բարեբեկ որքան հնարաւոր է և արդիւնքների մասին յայտնել սինօզին:

—Հոկտեմբերի 23-ին Մինօզը շուրաւէրցի Սիմէօն Պառաւեանցի խընդիրը իր սեպհական այգիի կաւածագրի և տիրապետութեան թղթի հետ ուղարկելով Կովկասի քաղաքական մասի տէր կառավարչապետին, լընդրում է ըստ զօրութեան 1011 և 1012 յօդ. քաղաքական օրինաց Ա. մասի Ա. հաստրոյ թոյլտուութեան, ընդունելու յիշեալ այգին յօգուտ տեղւոյն Ս. Մեսրոպի և Ս. Սահակ եկեղեցու:

Ամսոյս 6-ին կատարուեցաւ Ջրօրհնաց հանդէսը սովորական կարգով: Թէև ամեն տարիների պէս մեծ բազմութիւն չէր հաւաքւած հանդէսին, սակայն առանց վտանդի հասարակութիւնը անցաւ փոքրիկ փայտեայ կամուրջով: Հանդէսին մասնակցում էր Գրիգորիս Եպիսկոպոս Գառնակերեանը:

Ինչպէս յայտնի է, Վ. Պօլսում սկսել են հրատարակելու մեծ ազգայն ունեցող բանաստեղծ հանդուցեալ Պետրոս Գուրեանի բանաստեղծութիւնների լիակատար ժողովածուն: Հրատարակող պարոնները սրտով ցանկանալով Գուրեանի լուսանկարն էլ զետեղել ժողովածուի մէջ, ձեռնամուխ են եղել բանաստեղծի պատկերը նըկարելու նրա մօտաւոր ազգականներից հարցնելով թէ ինչպիսի գէմբի գծագրութիւն է ունեցել հանդուցեալը, որովհետև նա մինչև անգամ լուսանկար էլ չէ ունեցել:

*) Երբ նա, սրանից մի քանի ամիս առաջ, այդ անսնդութիւնը պատմեցի պ. Յովհ. Թումանյանցին, նա հէնց նոյն օրը կազմեց դրանից մի սիրուն ոտանաստեղ, որ տպուեցաւ «Մուրճ» ամսագրի № շորորդում:

*) Տես 1892 թ. «Աղսիրի» № 12 մեր Ախթամար անունով յօդւածը, որի շարունակութիւն պիտի համարել այս կտորը:

ՀԱՅԿԱՅԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, յունւարի 7-ին հայոց մշտական գերատանական խումբը ներկայացրեց առաջին անգամ «Նրւանդ Երկրորդ» պատմական դրաման 5 դործող, 8 պատկերով, հեղ. Մ. Պարեանի:

Պիէսի արժանաւորութեան մասին, այսքանը կարող ենք սասել, որ մեր պատմական դրամաների զգալի թւութիւնները չունի, եթէ չը յիշենք այն անվերջ մոծօլօզները, որոնցով համեմատ է ամբողջ պիէսը: Մի տեսարան, որ Նրւանդ երկրորդը ստանում է իր մօրը—Թագուհուն, եթէ բոլորովին գուրս ձգւած լինէր, ոչինչ

չէր կորցնիլ պիէսն իր ամբողջութիւնից:

Գլխուոր և ամենագլուար դերը՝ Նրւանդ երկրորդի կատարում էր պ. Սրւահամեան, որ մինչև վերջը տարաւ աջողութեամբ: Պ. Պետրոսեան Սմբատ Բաղրատունու դերում աջողակ էր, իսկ այն տեսարանում, ուր մեծ նախարարը սոչորում է հայրենիքի սիրով և յայտնում է իր վիշտը նրա զլխին եկած պատուհասների համար, պ. Պետրոսեան սրտառուչ խաղաց: Այդ երեկոյ վատ չէին իրանց գերելում պ. Վրդը և պ. Չարչոյլան. իսկ ինչ վերաբերում է միւսներին, պէտք է սասել, որ մի քանիսնե-

րը հայոց նախարարների տիպար չէին ներկայացնում, այլ թգուկների, ինչպէս Գիսակի՝ Արտաշէսի դայեակի որդու դեր կատարող պ. Աւետեանը:

Պիէսն արտաքին կողմից բաւականին չքեղ էր և լաւ տպագրութիւն թողեց հասարակութեան վրայ, ժողովրդով լիքն էր թատրոնը:

Հինգշաբթի, ամսոյս 14-ին խաղալու են Չուակ պիէսը օրիորդ Արաշեանի նպատին, որ հայ բեմի վրայ փայլում է իբրև տաղանդաւոր դերատանուհի:

Ճամբանկարտոր Խմբագիր
ԲՃ. Դ. Լիւիցեւսև
Հրատ. Տիգրանի Խաղարեան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իմ հեղինակութիւններից շատերն արդէն սարաւած են, մնում են միայն

- Հայկ խնդիր գիւնն — 80 կ.
- Ղահէս 1 մ.— »
- Յեցեր 1 մ.— »
- Բոզէ 1 մ.— »
- Սկիզբն երկանց 1 մ.— »

Վերջին աշխատութիւնս մինչև ամսիս վախճանը դուրս կը գալ տաւածին գրքերով և կողարկուի պ. պ. բաժանորդներին:

Բոլոր իմ աշխատութիւններն այսուհետև կարելի է ստանալ ինձանից:

Հասցէս Թլֆլիս, Դերսիււան դպրատնոց. Тифлист, Армянская Духовная Семинарія.

Գրովաճառներին և ստանից աւելի գումարով առնողներին կը լինի 30% վիճումն:

ՊԵՐՏ ՊՈՕՇԵԱՅՑ

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1893 ГО
НА ГАЗЕТУ
„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“
(десятый годъ изданія)

Газета будетъ выходить ежедневно, по прежней программѣ.

Городская подписка принимается въ конторѣ редакціи, Головинскій проспектъ. 12. Гр. иногородные обращаются по слѣдующему адресу: Тифлисъ, въ редакцію газеты „Новое Обозрѣніе“.

Условія подписки. съ пересылкою и доставкою: на годъ 10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к: за границу: на годъ,— 17 р., на полгода 9 р., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе какъ считая съ 1-го числа любого мѣсяца).

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, допускается разсрочка, на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Բ Ա Յ Ի Ա Ժ Է 1893 Թ Ի Ա Կ Ա Ն Ի Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը.
պատկերագարդ ԱՂԲԻԻՐԸ եւ ՏԱՐԱՉԸ կը հրատարակեն
ւճշտական աշխատակցութեամբ պ. պ. Գարրիէշ Միրզոյեանցի եւ
Ստեփանի Լիւիցեանցի, նոյն ծրագրով եւ դիրքով.

Տարեկան բաժանորդագինն է՝ «Աղբիրինը» 3 ռ., իսկ «Տարագինը» 6 ռ., ամսական «Աղբիրինը» — 30 կ., «Տարագինը» — 50 կ.: Տարւայ ընթացքում ընծաներ կըստանան միմիայն «Աղբիրի» եւ «Տարագի» տարեկան բաժանորդները վճարելով ճանապարհածախը 4 կոթը կրպէկանոց մարկա: Ամսական բաժանորդները եթէ ցանկանան տարեկան բաժանորդ դառնալ, վճարում են նորից ամբողջ տարւայ բաժանորդագինը:

Ապտիկ ոչ ոքի չի ուղարկում. ուսուցիչները, ուսանողները եւ աշակերտները գրելու «Աղբիրին» եւ «Տարագին» բաժանորդ, կարող են վճարել մաս մաս—5 ռ. յունւարին, 2 ռ. մարտի 1-ին, 2 ռ. էլ մայիսի 1-ին:

Հասցէն. Тифлисъ. Редакція иллюстр. журн. Агбуръ կամ Таразъ, իսկ արտասահմանից՝ Tiflis-Caucase
Rédaction des jour. illustrés Agbur կամ Taraz.